

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

---

Երկրաբանություն և աշխարհագրություն

3, 2012

*Геология и география*

*Երկրաբանություն*

УДК 556.30, 33, 34, 36

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ԶՐԵՐԻ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ՆՐԱՆՑ ԾԱՀԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Ա. Հ. ԱՊԻՆՅԱՆ<sup>1\*</sup>, Հ. Ա. ԱՊԻՆՅԱՆ<sup>2</sup>

<sup>1</sup> ԵՊՀ ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոն,  
Հայաստան

<sup>2</sup>ՀՀ Բնասպահականության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման  
գործակալության “Հիդրոերկրաբանական մոնիթորինգի” կենտրոն, Հայաստան

**Բանայի քառեր.** աղբյուրային ջրառ, հորատանցք, պաշարների  
օգտագործման գործակից, հիդրավիկ փոխագրեցություն:

**Ներածություն:** Հայաստանում թե՛ խմելու, և թե՛ կենցաղային նպատակների համար, ի տարրերություն բազմաթիվ այլ երկրների, հիմնականում օգտագործվում են ստորերկրյա քաղցրահամ ջրերը: Այս ջրերն ունեն բազմաթիվ առավելություններ՝ բարձր որակական հատկանիշներ, որտեղ չեն պահանջվում հատուկ մաքրման միջոցառումներ, արտածին գործոններից բնական պաշտպանվածություն, ինչպես նաև կայուն ռեժիմ: Հողվածում նկարագրված են ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրերի արդյունաբերական տիպերը, ստորերկրյա ջրերի ձևավորման, շարժման, կուտակման և շահագործման առանձնահատկությունները:

**Նյութը և մեթոդիկան:** Ինչպես բոլոր օգտակար հանածոները, այնպես էլ ստորերկրյա քաղցրահամ ջրերը ձևավորում են հանքավայրեր և հանդիսանում են ջրաերկրաբանական հետախուզական ուսումնասիրությունների առարկա:

Ստորերկրյա ջրերի հանքավայրը դա ջրատար համակարգի տարածական այն սահմանափակ մասն է, որտեղ երկրաբանական-տնտեսական և էկոլոգիական գործոնների համատեղ ազդեցությամբ ձևավորվում են բարենքապատ պայմաններ ստորերկրյա ջրերի ջրառի այն քանակի համար, որը բավարարում է տվյալ նապատակային օգտագործման համար [1–4]: Զեակերպումից հետևում է, որ հանքավայրը, անկախ ստորերկրյա քաղցրահամ ջրերի շահագործական պաշարների ձևավորման պայմաններից և չափերից, հիմնականում բնորոշվում է նպատակային ջրառով, որը, սակայն, չի ընդունվում մի խումբ ջրաերկրաբանների կողմից:

\* E-mail: [hydro@ysu.am](mailto:hydro@ysu.am)

Համանման այլ օգտակար հանածոների, ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրերը պահնում և կտրվածքում ունեն պայմանական սահմաններ, որոշակի ծավալներ և պաշարների ձևավորման տարատեսակ պայմաններ:

Ստորերկրյա ջրերի հանքավայրի սահմանագծումը որոշ դեպքերում պայմանական բնույթ է կրում: Օրինակ՝ մեծ մակերես զբաղեցնող Արարատյան արտեզյան ավազանում դժվար է հիմնավորել ստորերկրյա ջրերի հանքավայրերի անջատման սահմաններն, քանի որ առաջնահերթ նշանակություն ունեն հանքավայրերի միջև եղած հիդրավիկ փոխազդեցությունները նրանց շահագործման ընթացքում: Ներկայումս նրանց սահմաններն անշատվում են պայմանական, ըստ գոգավորության կառուցվածքային միավորների, որտեղ մի շարք ընդհանրությունների հետ միասին նկատվում են նաև տարրերություններ: Այս հանքավայրերում ընդհանուր են ջրերի սննման աղբյուրները, շարժման ուղղությունները, կուտակման և բեռնաբախման պայմանները, քայլ տարրեր են ջրատար ապարների ֆիլտրացիոն հատկությունները, ստորերկրյա ջրերի որակական և քանակական ցուցանիշները և շահագործման պայմանները: Նրանց ընդհանրությունները և տարրերությունները խոչընդոտում են Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսների պահպանմանը և օպտիմալ կառավարմանը:

Գոյություն ունեն ստորերկրյա քաղցրահամ ջրերի ոչ արդյունաբերական և արդյունաբերական նշանակության հանքավայրեր:

Ըստ Ն.Ի. Պլոտնիկովի՝ ոչ արդյունաբերական նշանակության ստորերկրյա ջրերի հանքավայրերին կարելի է դասել ինտրովիվ, էֆֆուզիվ, փոխակերպված ապարների հողմահարման կեղևում և նրանց արմատական ապարների ոչ խորը թափանցող ճեղքերում ձևավորված և սահմանափակ տարածում ունեցող գրունտային ջրերի հորիզոնները: Այդպիսի հանքավայրերից ջրարի հնարավորությունը խիստ սահմանափակ է և չի գերազանցում 5 հազ.  $m^3/\text{օր}$  ծախսը [5]: Այդ տիպի հանքավայրերը հանրապետությունում տարածված են հյուսիսային և հարավային ծալքավոր բեկորային և ծալքավոր լեռնաշղթաների ջրաերկրաբանական մարզերում և կապված են ինտրովիվ, հրաբխածին-նստվածքային, հրաբխածին և նստվածքային ոչ կարողացած թույլ ջրաբախանց ապարների հողմահարման կեղևի հետ: Նշված ապարների տարածման տեղամասերում բացակայում են նշանակալի քանակով ստորերկրյա ջրերի ռեսուրսների և պաշարների կուտակման համար բարենպաստ երկրաբանական կառուցվածքային պայմանները: Ոչ մեծ խորություններ (20-ից 50  $m$ ) թափանցող հողմահարման ճեղքերը, ուժեղ մասնատված և խոր ձորակներով կտրտված ռելիեֆը պայմանավորում են ստորերկրյա ջրերի տեղային տարածումը և նրանց բեռնաբախումն երկիր մակերևույթ փոքր ծախսով (մինչև 0,5  $l/s$ ) ռեժիմի խիստ փոփոխական կամ ժամանակավոր բնույթի բազմաթիվ աղբյուրների տեսքով (ՀՀ հյուսիսային և հարավային գետավազաններ): Նախկինում այդ շրջաններում կատարվել են ջրաերկրաբանական հետախուզական աշխատանքներ (հորատման աշխատանքներ), որոնք եղել են անարդյունավետ:

Այստեղ գերադասելի է կատարել ջրաերկրաբանական որոնողական երթուղային բնույթի աշխատանքներ ստորերկրյա ջրաղբյուրների բացահայտման և տարածքի ջրաերկրաբանական բարտեզագրման համար:

Ոչ արդյունաբերական նշանակության հանքավայրեր են ձևավորվում նաև տեկտոնական խախտման գոտիներում, որտեղ առանձին աղբյուրների ծախսը տատանվում է 3–5  $l/s$  սահմաններում (Մեղրի գետի ավազանում):

Կարբոնատային ապարների հետ կապված բացահայտված են հազվագյուտ մեծ ծախսով (մինչև 50 լ/վ) աղբյուրներ, բայց նշված ապարների գրաղեցրած սահմանափակ մակերեսներում չեն կարող ձևավորվել արդյունաբերական նշանակություն ունեցող ստորերկրյա ջրերի հանքավայրեր (Աղստեղ, Որոտանի, Տավուշի, Ողջիի և Արփայի գետավազաններ):

Ոչ աղյունաբերական նշանակության հանքավայրերը սովորաբար օգտագործվում են աղբյուրային ջրառներով՝ փոքր քննակավայրերի և տնտեսական փոքր օբյեկտների խմելու ջրամատակարարման համար:

Արդյունաբերական նշանակության հանքավայրերը են հանդիսանում խոշոր քաղաքների, արդյունաբերական օբյեկտների կամ մեծ մակերեսներով տարածքների ջրամատակարարման (խմելու և ոռոգման) աղբյուրները:

Արդյունաբերական նշանակության հանքավայրերի շահագործական պաշարները պետք է գերազանցեն 60–100 լ/վ ջրաքանակը ( $5000–8000 \text{ м}^3/\text{օր}$ ) [5]:

ՀՀ տարածքում տարածված են արդյունաբերական նշանակություն ունեցող ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրերի հետևյալ տիպերը:

1. Անդ գետահովտների գրունտային կամ ոչ ճնշումային ջրերի,
2. լավային կամ հրաբխային ապարների ճեղքային ջրերի,
3. միջլեռնային գոգավորությունների ճնշումային – ոչ ճնշումային ջրերի:
4. Նեղ գետահովտների գրունտային կամ ոչ ճնշումային ստորերկրյա ջրերի հանքավայրերը բացահայտված են ՀՀ հյուսիսային և հարավային ծալքավոր և ծալքավոր-բեկորային լեռնաշղթաների գետահովտներում (Աղստեղ, Դեբեդ, Հախում, Տավուշ, Ողջի, Սեղմա) մինչև 300 մ լայնության և շուրջ 25 մ հզրության գետահեղեղատային առաջացումներում: Այստեղ ձևավորվում է ոչ ճնշումային բնույթի տեխնածին գործոնների ազդեցությունից բույլ պաշտպանված գրունտային կամ ենթահունային ջրերի հորիզոն: Հորիզոնի ջրերի սնումը կատարվում է հիմնականում գետային հոսքի ներծծման հաշվին շահագործման ընթացքում գետի ջրերի ներգրավվող ռեսուսներով, աննշան քանակով՝ ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսներով և բնական պաշտպանության ջրառը կատարվում է ուղղաձիգ ջրառներով (հորատանցքներով), որոնք հիմնականում դասավորվում են գետին գուգահեռ, հազվագետ՝ ուղղահայաց: Բարձրադիր գոտիներում երբեմն օգտագործվում են հորիզոնական փակ դրենաժներ: Խմելու ջրամատակարարման համար օգտագործվող ջրառները պետք է ապահովված լինեն սանիտարական պահպանման I և II գոտիներով:

5. Լավային ապարների ճեղքային ստորերկրյա ջրերի հանքավայրերը լայն տարածում ունեն ՀՀ կենտրոնական հրաբխային լեռնաշղթաների լեռնային և նախալեռնային գոտիներում: Վերին պլիոցեն-շորրորդական հասակի լավաներն ուժեղ ճեղքավորվածության շնորհիվ կլանում են մքննորտային տեղումների գերակշիռ մասը և ձևավորում նշանակալի քանակի ստորերկրյա ջրերի ռեսուրսներ: Հրաբխային լեռնաշղթաների բարձրադիր գոտիներում տարածված են քարացրոնները կամ քարաբեկորների կուտակումները՝ շինգիները: Նույնիսկ հորդառաստ անձրևների կամ գարնանային հեղեղումների ժամանակ, նրանց տարածման դաշտերում չի ձևավորվում մակերևութային հոսք: Տեղումներն ամբողջությամբ ներծծվում են խորք և լրացնում ստորերկրյա ջրերի ռեսուրսները: Ջրերի ձևավորումը կատարվում է լավային ապարների ճեղքերում և ծակոտիներում, կուտակումը և շարժումը՝ հնահովիտներում, իսկ բեռնաբափումը՝ հնահովիտների էռողիոն կտրվածքներում կամ լավային հոս-

քերի լեզվակային (սեպան ավարտման) մասերում՝ աղբյուրների տեսքով:

Նկարագրվող հանքավայրերի ջրերն օգտագործվում են աղբյուրային ջրառներով, որոնց թիվն առանձին հանքավայրերում մի քանի տասնյակ է, իսկ գումարային ծախսը՝  $0,4\text{--}2,5 \text{ m}^3/\text{q}$  (Ակունքի, Վարդենիսի, Արգականի և այլն):

Լեռնային և նախալեռնային գոտիների լավատակ գետային հնահուները պայմանավորում են այս հանքավայրերի ստորերկրյա ջրերի տեղային տարածումը, որոնց գգալի մասը տարանցիկ խորքային հոսքով մտնում է միջլեռնային գոգավորություններում:

3. *Միջլեռնային գոգավորությունների ճնշումային ոչ ճնշումային ջրերի հանքավայրերը* տարածված են ՀՀ մեծ (Արարատյան, Սևանի, Գյումրիի, Լոռու) և փոքր (Վերին Ախուրյանի, Փամբակի, Որոտանի և այլն) մակերես գրաղեցնող միջլեռնային գոգավորություններում և իջվածքներում:

Ստորերկրյա ջրերի սննումը կատարվում է գոգավորությունը շրջապատող լեռնաշրաների լեռնալանջերում ձևավորվող ստորերկրյա ջրերի խորքային տարանցիկ հոսքով, ինչպես նաև նախալեռնային գոտիներում մակերևութային հոսքի ներծծման շնորհիվ: Բոլոր գոգավորություններում բացահայտված են հիդրավիկ փոխադարձ կապի մեջ գտնվող ճնշումային և ոչ ճնշումային ջրատար հորիզոններ, քաղցրահամ, աղահամ և գագերով (հիմնականում ածխարքով) հագեցած հանքային ջրեր: Հիդրավիկ կապը պահպանվում է նաև մակերևութային ջրերի հետ:

Ճնշումային ջրերի մակարդակը սովորաբար բարձր է գրունտային ջրերի մակարդակից, իսկ գոգավորության կենտրոնական մասերում կամ ցածր հիպսոմետրական նիշերում ճնշումային ջրերի հորատանցքերը շատրվանում են: Այդ տեղամասերում ճնշումային ջրերի բեռնաբախումն երկրի մակերևույթը կատարվում է ճահճացումների, կենտրոնացված և ցրված ելքերով աղբյուրների տեսքով և գետահուներում, որոնք լրացնում են մակերևութային հոսքի ռեսուլսները: Հանքավայրերի շահագործումը հիմնականում կատարվում է հորատանցքերի օգնությամբ, սակայն հորատանցքերով մեծաքանակ ջրառի դեպքում իջնում է ճնշումային ջրերի մակարդակը, որի հետևանքով դադարում է նրանց բեռնաբախումն երկրի մակերևույթը, իսկ գետային հոսքը պակասում է համապատասխան քանակով:

Ներկայումս Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերն ելենով տեխնիկատեսական պայմաններից, օգտագործվում են անհավասարաշափ: Առավել մեծ պահանջարկ ունեն քացրահամ ջրերը, որի պատճառով նրանց տարածման գոտում նկատվում է ճնշումային ջրերի պիեզոմետրական մակարդակի անկում: Նման շահագործման պայմաններում փոխվում են ստորերկրյա ջրերի շարժման ուղղությունները, աղահամ ջրերը քափանցում են ցածր ճնշում կամ մակարդակ ունեցող քաղցրահամ ջրերի տարածման գոտի և բարձրացնում են նրանց հանքայնացումը: Արդյունքում՝ կորցնում ենք բարձրորակ քաղցրահամ ջրերի հանքավայրը: Ինտենսիվ շահագործման պատճառով, հանքայնացման բարձրացնան վտանգ է սպառնում նաև Կոտայքի մարզի Կաքնարբյուր-Մայակովսկի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հանքավայրի տեղամասին:

Ստորերկրյա ջուրը միակ օգտակար հանածոն է, որի պաշարներն արդյունահանման կամ օգտագործման հետ միասին համալրվում են: Պաշարների լրացնումը կատարվում է ի հաշիվ մակերևութային և հարակից ջրատար հորիզոնների (նույն և այլ ավազանների) ստորերկրյա ջրերի ներքափական-

ման, մթնոլորտային տեղումների և ոռոգման ջրերի ներծծման ուժեղացման, գոլորշիացման իջեցման, հիլդոտեխնիկական կառուցվածքներից ֆիլտրացիոն կորուստների և ստորերկրյա ջրերի արհեստական համալրման: Նշված առանձնահատկությունները պայմանավորում են ջրաերկրաբանության մեջ այնպիսի հասկացությունների կիրառման անհրաժեշտությունը, որոնք թույլ են տալիս բնորոշել բնական պայմաններում, ջրատնտեսական միջոցառումների և ստորերկրյա ջրերի շահագործման ժամանակ ջրատար հորիզոն մուտք գործող, ինչպես նաև արդյունավետ ջրառ կառուցման նրանից վերցրած օպտիմալ ջրաբանակները: Այդ դասակարգումը կատարել է Ն.Ն. Բինդենանը [3], առանձնացնելով ստորերկրյա ջրերի շահագործման հետևյալ տերմինները. բնական պաշարներ և ռեսուրսներ, արհեստական պաշարներ և ռեսուրսներ, ներգրավվող ռեսուրսներ, շահագործական պաշարներ:

Տնտեսական նպատակներով ստորերկրյա ջրերի օգտագործման նպատակահարմարությունը կարող է գնահատվել շահագործական պաշարների հիման վրա, որոնք վերոհիշյալ ռեսուրսների և պաշարների հետ կապված են հետևյալ հաշվեկշռային բանաձևով.

$$Q_2 = \alpha_1 Q_{\text{պն}} + \alpha_2 \frac{V_{\text{պն}}}{t} + \alpha_3 Q_{\text{ար}} + \alpha_4 \frac{V_{\text{ար}}}{t} + Q_{\text{ներ}}, \quad (1)$$

որտեղ՝  $Q_2$ ,  $Q_{\text{պն}}$ ,  $Q_{\text{ար}}$  և  $Q_{\text{ներ}}$  – շահագործական, բնական, արհեստական և ներգրավվող պաշարներն են,  $t^3/\text{օր}$ ;  $V_{\text{պն}}$  և  $V_{\text{ար}}$  – բնական և արհեստական պաշարներն են,  $m^3$ ;  $t$  – ալաշարների շահագործման հաշվարկային ժամանակն է, հաշված օրերով;  $\alpha_1$ ,  $\alpha_2$ ,  $\alpha_3$ ,  $\alpha_4$  – բնական և արհեստական պաշարների օգտագործման գործակիցներն են:

Կախված բանաձևի բաղադրիչների մասնակցության աստիճանից տվյալ ջրավագանում, շահագործական պաշարները կարող են ապահովել սահմանափակ կամ անսահմանափակ ժամանակով: Վերջինը հնարավոր է, եթե նրանց ձևավորումը կատարվում է բնական և արհեստական, ինչպես նաև ներգրավվող ռեսուրսներով (անսահմանափակ ժամանակում պաշարները ձգուում են զրոյի): Այդ պատճառով բանաձև (1)-ում, կարևոր նշանակություն ունեն ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների ձևավորմանը մասնակցող տարրեր ռեսուրսների օգտագործման գործակիցների որոշումը: Ստորերկրյա ջրերի բնական ռեսուրսների օգտագործման աստիճանը որոշելու համար պետք է հաշվի առնել նրանց գնահատման մեթոդը, ջրատար հորիզոննի ֆիլտրացիոն հատկությունները (հիմնականում ջրահաղորդականությունը) և ջրառի բնույթը (հորատանցքերում ջրի մակարդակի իջեցման թույլատրելի չափերը, հորատանցքերի միջև հեռավորությունները): Եթե նրանք գնահատվել են ջրային հաշվեկշռի և գետային հոսքի մասնատման եղանակով, պետք է հաշվի առնել նրանց մի մասը, քանի որ բոլոր հաշվարկային պարամետրերն ունեն բազմայա միջին տարեկան նշանակություն: Եթե բնական ռեսուրսները գնահատվել են ըստ հոսքի ծախսի (Դարսի բանաձևով) կամ աղբյուրային հոսքի ցածր նշանակությամբ նրանք հիմնավորված են ամբողջությամբ: Բնական ռեսուրսների օգտագործման գործակիցը նշված պայմանների դեպքում որոշվում է յուրաքանչյուր շրջանի համար կախված նրա ջրաերկրաբանական պայմաններից և ջրատար հորիզոնների ուսումնասիրվածության աստիճանից: Սովորաբար, օգտագործ-

մաս գործակիցն ընդունվում է 0,1–0,3, առանձին դեպքերում 0,5–0,7:

Ստորերկրյա ջրերի բնական պաշարներն իրենցից ներկայացնում են բնական պայմաններում ջրատար հորիզոնում գտնվող գրավիտացիոն ջրի զանգվածը: Այդ զանգվածի այն մասը, որը կարելի է ստանալ ճնշումային ջրատար հորիզոնից ջրի և ապարների առաձգական հատկությունների շնորհիվ, առանց հորիզոնի չորացման, կոչվում են առաձգական պաշարներ: Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների գնահատման ժամանակ պաշարներն արտահայտվում են ծավալային միավորներով: Այդպիսի մոտեցումից ելնելով, բնական պաշարները հավասար են շերտում գտնվող ջրի ծավալի (ծավալային պաշարներ) և առաձգականության շնորհիվ դուրս մղված ջրի ծավալի գումարին:

Կախված ստորերկրյա ջրերի հանքավայրի ջրաերկրաբանական պայմաններից և սահմանային պայմանների նկատմամբ ջրհավաք կառույցների համակարգի տեղադրքից, շահագործական պաշարների ձևավորմանը կարող են մասնակցել ստորերկրյա ջրերի բոլոր տիպի ռեսուրսները և պաշարները, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել: Այդ պատճառով շահագործական պաշարները կարող են ապահովել որոշակի ժամանակով՝ առանձին բաղադրիչներով կամ անորոշ ժամանակով՝ բոլոր բաղադրիչներով: Վերջին դեպքում ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները ձևավորվում են բնական և արհեստական ռեսուրսներով, ինչպես նաև ներգրավվող ռեսուրսներով:

#### Եզրակացություն:

1. Կատարվել է ՀՀ տարածքում տարածված արդյունաբերական նշանակություն ունեցող ստորերկրյա ջրերի հանքավայրերի ստորաբաժանում՝

ա) նեղ գետահովիտների ոչ ճնշումային ջրերի;

բ) լավային կամ հրաբիսային ապարների ճեղքային ջրերի;

գ) միջլեռնային գոգավորությունների ճնշումային – ոչ ճնշումային ջրերի:

2. Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների գնահատումն առավել կարևոր է միջլեռնային գոգավորությունների ճնշումային հորիզոնների համար, երբ շահագործման սկզբնական փուլում չեն նկատվում ջրերի որակի և քանակի փոփոխություններ, քանի որ շահագործումը կատարվում է առաձգական պաշարների հաշվին: Հետագա տարիներին նկատվում է շահագործական պաշարների սպառում, հանքայնացման բարձրացում և աղտոտում:

3. Ներկայացվում է ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և այլ տիպի ռեսուրսների և պաշարների կապը հաշվեկշռային բանաձևի օգնությամբ, որտեղ մեծ ուշադրություն պետք է դարձնել տարբեր բաղադրիչների օգտագործման գործակիցներին:

Ստացվել է 25.06.2012

#### ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

1. Основы гидрогеологии. Гидрогеодинамика. Под ред. И.С. Зекцера. Новосибирск: Наука, 1983, с. 210–230.
2. **Язвин Л.С., Боревский Б.В. и др.** Формирование, принципы изучения и оценки ресурсов пресных подземных вод. В кн.: Актуальные проблемы гидрогеологии. М., 1989, с. 60–74.

3. Биндеман Н.Н., Язвин Л.С. Оценка эксплуатационных запасов подземных вод. М.: Недра, 1970, 216 с.
4. Боревский Б.В., Боревский Л.В., Язвин А.Л. Принципы определения границ месторождений подземных вод. // Разведка и охрана недр. М., 2010, № 10, с. 9–14.
5. Плотников Н.И. Поиски и разведка пресных подземных вод. М.: Недра, 1985, с. 191–222.

А. О. АГИНЯН, О. А. АГИНЯН

## ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ И ОЦЕНКИ ЭКСПЛУАТАЦИОННЫХ ЗАПАСОВ МЕСТОРОЖДЕНИЙ ПРЕСНЫХ ПОДЗЕМНЫХ ВОД НА ТЕРРИТОРИИ АРМЕНИИ

### Резюме

В статье проведена типизация месторождений пресных подземных вод промышленного значения на территории Армении по условиям их формирования. Выделены следующие промышленные типы месторождений пресных подземных вод:

- 1) грунтовые или безнапорные воды узких речных долин;
- 2) трещинные воды вулканических или лавовых пород;
- 3) напорно-безнапорные воды межгорных котловин.

Из перечисленных типов месторождений формируются естественные и искусственные ресурсы и запасы подземных вод, а также привлекаемые ресурсы. Они обеспечивают эксплуатационные запасы подземных вод и обуславливают их рациональное использование. Приводится оценка степени возможного использования естественных ресурсов и запасов пресных подземных вод.

A. H. AGHINIAN, H. A. AGHINYAN

## PECULIARITIES OF GROUNDWATER OCCURRENCE AND SAFE YIELD ESTIMATION IN THE TERRITORY OF ARMENIA

### Summary

The article presents the classification of fresh groundwater deposits of commercial importance of their occurrence in the territory of Armenia. The following types of fresh groundwater deposits have been distinguished:

- 1) water-table aquifers of narrow river valleys;
- 2) fracture waters of volcanic rocks;
- 3) confined-nonconfined waters of intermountain basins.

Natural and artificial resources and reserves occur in these types of deposits as well as attracted groundwater resources. They provide operational reserves of groundwater. The estimation of safe yield out of fresh groundwater resources and reserves is provided.